եղավ մանր պարսիզանական կռիվներ մղելով թողնել Երևանը և ամրանալ Երնջակի բերդում[35]։

Կռիվների նկարագրությունից պարզ երևում է, որ Երևանի բերդը, եթե այն ընդհանրապես այդ ժամանակ եղել է, ապա լավ ամրացված չի եղել։ Դա հաստատվում է նախ այն իրողությամբ, որ Մուհամմադի խանը երկարատև դիմադրության համար հարմար գտավ միայն Երնջակի բերդը։ Բացի այդ, ո՛չ թուրքական և ո՛չ էլ պարսկական ու հայկական աղբյուրները չեն նշում բերդի գրավման մասին, այլ տալիս են միայն քաղաքի գրավման նկարագրությունը։ Իսկ, որ ամենից ուշագրավն է՝ բոլոր ժամանակակից աղբյուրներն ու հետագա ժամանակագիրները արձանագրում են, որ Ֆարհադ փաշան Երևանը գրավելուց հետո անմիջապես ձեռնարկեց նոր և ամուր պարիսպներով շրջապատված բերդի կառուցումը, օգտագործելով Երևանի ավերված եկեղեցիների քարերը[36]։

Իսքանդար Մունշին նշում է, որ այդ բերդի կառուցումից հետո, որտեղ Ֆարհադ փաշան թողել էր լավ սպառազինված մեծ կայազոր և վերադարձել էրզրում, մոտակա ժամանակների համար այլևս անհնարին դարձավ կըզըլբաշների իշխանության վերահաստատումը Արարատյան երկրում[37]։

Ռազմական գործողություններն այնուհետև օսմանցիների ու կըզըլբաշների միջև ընթացան վերջիններիս համար ոչ նպաստավոր պայմաններում։ Հատկապես 1586 թ. հետո, երբ խորհրդավոր պայմաններում սպանվեց գահի առաջին ժառանգորդ, խիզախ զորահրամանատար Համզա Միրզան։ Դա չափազանց ծանր կորուստ էր կույր և անձեռներեց Խուդաբանդա շահի համար, որը 1587 թ. ստիպված եղավ հեռանալ Խորասան, գահը զիջելով կրտսեր որդուն՝ Աբբաս I-ին։

Երիտասարդ շահն առաջին հերթին ձգտելով ամրացնել երկրի արևելյան սահմանները, բոլոր ուժերը կենտրոնացրեց դուրս մղելու ուզբեկական զորքերին, որոնք գրավել էին ամբողջ Խորասանն ու Սիսթանը։ Այս պայմաններում նա ստիպված էր ստորագրել 1590 թ. թուրքերի առաջարկած չափազանց ծանր պայմանագիրը, ըստ որի ամբողջ Անդրկովկասն ու Ատրպատականը, բացի Արդաբիլի ու Թալիշի շրջաններից, անցնում էին Թուրքիային։ Այսպիսով, 1583 թ. մինչև 1604 թ., շահ Աբբասի կողմից վերագրավումը, Արարատյան երկիրը գտնվում էր Թուրքիայի տիրապետության տակ։

Շարաֆ խան Բիթլիսին, որն այդ ժամանակ գտնվում էր Վրաստանն ասպատակող Հասան փաշայի բանակում, հաստատում է, որ Ֆարհադ փաշան Երևանը գրավելուց և այնտեղ բերդ կառուցելուց հետո բեկլարբեկի է նշանակել Խրդրը փաշային, որի վեզիրն էր Ջզալ-Օղլի Սինան փաշան[38]։ 1588—1589 թթ. դեպքերը նկարագրելիս Իսքանդար Մունշին Սինան փաշային հիշում է որպես Բաղդադի բեկլարբեկի, որը գլխավորում էր այդ կողմերում ձեռնարկված ռազմական գործողությունները[39]։ Ալիշանը այլ աղբյուրների հիման վրա նույնպես գրում է. «և էր յայնժամ կողմնակալ սոցա յԵրևան Խզրը

35 Իսքանդար Մունշի, հ. I, էջ 293։

36 Տե՛ս նույն տեղում, Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Վաղարշապատ, 1896, էջ 64, «Մանր ժամանակագրություններ», հ. I, էջ 159։

37 «Մանր ժամանակագրություններ», հ. I, էջ 293 և 305։

38 Schéref-nameh, հ. II, էջ 270։

39 Իսքանդար Մունշի, հ. I, էջ 406։